Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանուն
ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

2. Զբաղեցրած պաշտոնը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

3. Գործուղման վայրը և ժամկետները
Մոնրեալ,Կանադա, 2019 թվականի սեպտեմբերի 23-29-ը

4. Հրավիրող կողմը

Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն (այսուհետ՝ ԻԿԱՕ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն ԻԿԱՕ-ի Ասամբլեայի 40-րդ նստաշրջանին

6. Քննարկված թեմաները

Ասամբլեան ԻԿԱՕ-ի ղեկավար մարմինն է, որը հրավիրվում է Խորհրդի կողմից ոչ ուշ, քան երեք տարին մեկ: 193 անդամ-պետությունները և բազմաթիվ միջազգային կազմակերպությունները հրավիրվում են Ասամբլեայի նիստերին, որի ընթացքում հաստատվում է ԻԿԱՕ-ի գլոբալ քաղաքականությունը առաջիկա երեք տարիների համար: Ասամբլեայի ընթացքում քննարկվել է ԻԿԱՕ-ի աշխատանքների ամբողջ ասպեկտը տեխնիկական, տնտեսական, իրավական ոլորտներում և տեխնիկական համագործակցության բնագավառում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ասամբլեան ընթացավ լիագումար նիստերի, ինչպես նաև տեխնիկական, տնտեսական, իրավաբանական և ադմինիստրատիվ հանձնաժողովների ձևով: Խորհրդի կողմից Գործադիր կոմիտեի քննարկմանը ներկայացվեցին 2016, 2017 և 2018 թվականների կատարած աշխատանքները: Խորհրդի կողմից ներկայացվեց զեկույց ավիացիոն անվտանգության ապահովման ուղղությամբ և այլ նախաձեռնությունների վերաբերյալ՝ «Ավիացիոն անվտանգության ապահովման գլոբալ պլանի», «Ահաբեկչական ակտերի հետևանքով միջազգային խաղաղության և անվտանգության սպառնալիքներ. ավիացիոն անվտանգություն» 2309 ռեզոլյուցիայի ռեալիզացիայի շրջանակներում: Խորհրդի առաջարկությամբ ընդունվեց «Ավիացիոն անվտանգության բնագավառում ԻԿԱՕ-ի մշտական քաղաքականության մասին» հայտարարություն:
Խորհրդի կողմից ներկայացվեց Կոնվենցիայի 9-րդ հավելվածի՝ Ընթացակարգերի պարզեցման, Ուղևորների նույնականացման ծրագրի (TRIP) իրականացման

վերաբերյալ ձեռնարկված քայլերի մասին: Նախանշվեցին 2020, 2021 և 2022 թվականների այս բնագավառում առաջնահերթությունները: Քննարկվեցին շրջակա միջավայրի պաշտպանության ընդհանուր դրույթները, ավիացիոն աղմուկի և օդի որակի, միջազգային ավիացիայի և կլիմայի փոփոխության ոլորտում քաղաքականությունը և ստանդարտիզացիան, միջազգային ավիացիայի փոխհատուցման և ածխածնային արտանետումների կրճատման համակարգը (CORSIA):
Խորհրդի կողմից ներկայացվեցին 2014 թվականից մեկնարկած «Ոչ մի պետություն չպետք է անտեսվի» (NCLB) նախաձեռնության իրականացման ուղղությամբ և նախանշվեցին 2020, 2021 և 2022 թվականների այս բնագավառում առաջնահերթությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Կայացել են մեծ թվով երկկողմ և բազմակողմ հանդիպումներ, ինչպես Հայաստանի համար, այնպես էլ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող: Մասնավորապես՝ Վրաստանի ավիացոն գործակալության ղեկավար Լևան Կարանաձեի հետ կնքվել է համագործակցության մասին հուշագիր: Հնդկաստանի պատվիրակության ղեկավար՝ քաղաքացիական ավիացիայի նախարարի (Singh Puri Hardeep) հետ քննարկվել են հետագա փոխգործակցության զարգացման հնարավորությունները: Սինգապուրի պատվիրակության, մասնավորապես՝ Սինգապուրի տրանսպորտի նախարարի միջազգային հարաբերությունների և անվտանգության հարցերով տեղակալի (Bernard Leem) հետ քննարկվել է ավիացիոն կրթության, փորձի փոխանակման բնագավառներում համագործակցության զարգացման հնարավորությունները: Ռուսաստանի Դաշնության պատվիրակության, մասնավորապես՝ տրանսպորտի նախարարի տեղակալ Ալեքսանդր Յուրչիկի հետ քննարկվել են առկա խնդիրները, դրանց հնարավոր արդյունավետ լուծման ուղիները: Հանդիպում է կայացել նաև Միջպետական Ավիացիոն Կոմիտեի նախագահ Տատյանա Անոդինայի հետ, որի ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ միջադեպերի քննության բնագավառում կառույցի հարուստ փորձի փոխանակման վերաբերյալ:
Կանադայի ավիացիոն ծառայության հետ հանդիպման ընթացքում նախնական համաձայնություն է ձեռք բերվել ուսումնասիրություններ իրականացնել թռիչքների կազմակերպման հնարավորությունների և այդ նպատակով կնքել երկկողմանի միջպետական համաձայնագիր: Արաբական Միացյալ Էմիրությունների իրավասու մարմինների հետ ևս քննարկվել են ավիացիոն կրթության, ավիացիոն պատահարների քննության բնագավառում, ավիացիոն փորձի փոխանակման, ինչպես նաև նրանց նախաձեռնությամբ հիմնված և լայն աջակցություն ստացած ավիացիոն երիտասարդ առաջնորդների ցանցում Հայաստանը ներգրավելու անհրաժեշտությունը: ԵՄ ղեկավարության հետ հանդիպման ընթացքում վերհանվեցին Եվրոպայի թռիչքային անվտանգության գործակալության (European Aviation Security Agency, այսուհետ՝ ԵԱՍԱ) կազմակերպության կողմից կատարված աուդիտի շրջանակներում բացահայտված խնդիրները, ինչի կապակցությամբ ձեռնարկվել են համարժեք արագ միջոցներ ԵԱՍԱ-ի, ԻԿԱՕ-ի ղեկավարության (Սիլվեյն Լեֆոյերի, Դենիս Գուինդոնի) հետ անց են կացվել խորհրդակցություններ և արդեն վերադառնալուն պես իրավասու մարմիններին տրվել են կոնկրետ քայլեր ձեռնարկելու մասին հանձնարարականներ:

2019 թվականի օգոստոսի 26-ից սեպտեմբերի 4-ը ավիացիոն անվտանգության վերաբերյալ ԻԿԱՕ-ի կողմից անցկացված աուդիտի (USACCMA) ընթացքում վերհանված թերությունների մասով ներկայացված նախնական հաշվետվության դիտողությունների հետ կապված հանդիպումներ են կայացել ԻԿԱՕ-ի բարձրաստիճան պատասխանատուների հետ (Խուան Լամոսա – Ավիացիոն անվտանգության աուդիտի բաժնի բյուրո, Կարեն Զադոյան – Ավիացիոն անվտանգության թիմի ղեկավար): Քննարկումների արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը փոխանցվել է «Զվարթնոց» միջազգային օդանավակայան, որի կողմից ձեռնարկված քայլերի մասին տեղեկացվել է ԻԿԱՕ-ին և ստացվել է վերջնական լուծում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Քանի որ ԻԿԱՕ-ն հանդիսանում է Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) մասնագիտացված կառույց, ԻԿԱՕ-ն իր աջակցությունն է հայտնել մինչև 2030 թվականը կայուն զարգացման նպատակների օրակարգին: ԻԿԱՕ-ն նաև կոչ արեց անդամ-պետություններին պարտաճանաչ վճարել անդամավճարները և տարբեր ծրագրերի իրականացման համար կամավոր հատկացումներ կատարել տեխնիկական աջակցության ծրագրերի իրականացման նպատակով: Անդրադարձ կատարվեց քաղաքացիական ավիացիայի մասնագետների պատրաստման կարևորությանը՝ «Ավիացիոն մասնագետների հաջորդ սերունդ» ծրագրի (NGAP), TRAINAIR PLUS և ավիացիոն անվտանգության ուսումնական կենտրոնների ցանցի (ASTC) շրջանակներում:

_____

ստորագրությունը, ամսաթիվը

X _____